

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՄՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ Ա. ԶԵՅՆԱԼՅԱՆԻ, Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ Կ. ՌՈՒԲԻՆՅԱՆԻ,
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱ-
ՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 290 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 5-ՐԴ ՄԱՍՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՄՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երեւան

7 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Շ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի,
Մ. Թոփուզյանի, Վ. Դովիանիսյանի, Շ. Նազարյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ դիմողներ Ա. Զեյնալյանի, Մ. Դանիելյանի, գործով որպես
պարասիստող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայա-
ցուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխարակազմի իրավաբանական վարչության պետ
Ա. Խաչարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի
1-ին կետի և 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Ա. Զեյ-
նալյանի, Ա. Սարգսյանի և Կ. Ռուբինյանի, Մ. Դանիելյանի դիմումների հիման վրա՝
ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին և 5-րդ մասերի՝ Հա-
յաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը
որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ՝ Ա. Զեյնալյանի՝ 01.06.2009թ., Ա. Սար-
գսյանի և Կ. Ռուբինյանի՝ 09.11.2009թ., Մ. Դանիելյանի՝ 17.11.2009թ. ՀՀ սահմա-
նադրական դարարան մուգքագրված դիմումներն են:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածով՝ սահմանադրական դատարանի 17.11.2009թ. ՍԴԱՌ-101 և 24.11.2009թ. ՍԴԱՌ-106 աշխատաքարգային որոշումներով վերոհիշյալ դիմումներով գործերը միավորվել են և բննվել դատարանի նույն նիստում:

Ուսումնախրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմողների գրավոր փաստաթիւները, պարագաները կողմի գրավոր բացաբրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դարձարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթիւները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դարձարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

«Հ քրեական դադավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող «Նեփաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դադախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական եւ անհիմն որոշումների եւ գործողությունների բողոքարկումը դադարան» վերդառությամբ 290 հոդվածի 1-ին եւ 5-րդ մասերը սահմանում են.

«1. Ներաբննության մարմնի աշխափակցի, քննիչի, դադախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախադեսված որոշումների եւ գործողությունների օրինական եւ հիմնավոր չիններու դեմ բողոքները դադարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, փուժողի, քրեական դադարակարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները եւ օրինական շահերը խախուսվել են այդ որոշումներով եւ գործողություններով, եւ եթե նրանց բողոքները չեն բավարարվել դադախազի կողմից:

• • •

5. Բողոքը ճանաչելով իիմնավորված՝ դարպավորը որոշում է կայացնում անձի իրավունքների եւ ազագությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարփականության մասին: Գրնելով, որ բողոքարկված գործողությունները կարարված են օրենքին համապարախան, եւ անձի իրավունքները կամ ազագությունները խախտված չեն, դարպարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դարպավորի որոշման պարճենն ուղարկվում է դիմողին եւ վարույթն իրականացնող մարմնին»:

2. Վիճարկելով վերոնշյալ նորմերի սահմանադրականությունը՝ դիմողները գպնում են, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասը ձեւակերպված է այնքան անորոշ, «ոչ միանշանակ, ոչ հսկակ», որ դատարանները դրանք ընկալում եւ կիրառում են որպես հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից **դրսեւրած անգործության դատավական կարգով բողոքարկման կարգ: Այդ անորոշությունը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, «ուստի՝ վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության իրավական որոշակիության սկզբունքներն ամրագրող՝ 1-ին, 3-րդ, 6-րդ եւ 43-րդ հոդվածներին»: Ըստ դիմող Ա. Զեյնալյանի՝ «Դատարանների՝ դատավական ակդերով վերոգրյալ նորմին փրկած մեկնաբանությունից հետեւում է, որ անձը կարող է ոստիկանության ոչ իրավաչափ անգործությունից ՀՀ Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորված «դատավական պաշտպանություն» հայցել միայն այն պայմանով, եթե ոստիկանության ոչ իրավաչափ անգործությունից դատախազության (որպես դատարանից փարբերվող «պետական այլ մարմնի») առջեւ «իրավական պաշտպանության միջոցը» սպառել է, ու այդ միջոցը եղել է անարդյունավեպ: Դատարանի կողմից օրենսգրքի դրույթին փրկած մեկնաբանությունը կամ, եթե խնդրո առարկա դրույթը հենց այդպես ու այդ նպատակով է գրված է, հակասում է ... ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ, Կոնվենցիայի 6, 13-րդ հոդվածներին»: Դիմողի կարծիքով, հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների դրսեւրած **անգործության դեմ դատավական պաշտպանության իրավունքն իրացնելու համար «միջանկյալ օդակ նախագիծները չի բավարարում՝ իրավունքների արդյունավեպ պաշտպանության իրավունքի չափանիշին, ինչը՝ ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներով երաշխավորված դատավական պաշտպանության իրավունքի բաղադրիչն է»: Դիմողը եզրակացնում է, որ ՀՀ «Քրեական դատավարության» օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 6, 43-րդ հոդվածներին կամ ՀՀ ««Քրեական դատավարության» օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝», եւ եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, **«անգործության» մասով հակասում է ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներին»:******

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի սահմանադրականության վերաբերյալ նույնաբովանդակ փաստարկներ են ներկայացրել նաև դիմողներ Ա. Սարգսյանը, Կ. Ռուբինյանը եւ Մ. Դանիելյանը: Բացի դրանից, դիմողներ Ա. Սարգսյանը եւ Կ. Ռուբինյանը գպնում են, որ «ՀՀ «Քրեական դատա-

վարության» օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պաշտոնագործական անձանց գործողություններից եւ որոշումներից դադարական պաշտպանություն հայցելու «սուրսփիլիար» սկզբունքի վերացնելու դեպքում ի հայր կգա շահերի իրական բախում՝ մրցակցություն, նախաքննության մարմին-դադարական պաշտոնագործական, որդեռ՝ պաշտպանության միջոցի արդյունավետության գործակելիությունը կապարան, որդեռ՝ պաշտպանության միջոցի արդյունավետության գործակելիությունը կապարան, որդեռ՝ պաշտպանության մարմնի որոշումների, թե՛ դադարական բախում ի հայր կգա շահերի որոշումների որակը, եւ վերջապես՝ դադարականի անկախությունը»:

«ՀՀ քրեական դադարական պաշտոնագործական օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողներ Ա. Սարգսյանը եւ Կ. Ռուբինյանը գրնում են, որ վերջինիս «... վարույթն իրականացնող մարմնի պարտականության» դրույթի պարզաբնությունը, թույլ չի փրկում ապահովել «անձի խախված իրավունքների լիարժեք ու ամբողջական վերականգնում»: Ներկայացնեար՝ այդ դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված իրավունքների եւ ազագությունների դադարական պաշտպանության իրավունքը երաշխավորող 18 եւ 19-րդ հոդվածներին:

3. Պարասահմանող կողմը գրնում է, որ ՀՀ քրեական դադարական պաշտոնագործական օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասում խոսք է գտում միայն գործողությունների եւ որոշումների բողոքարկման հնարավորության մասին, սակայն դիմումագրուն չի ներկայացրել որեւէ փաստարկ առ այն, որ փվյալ նորմի իրավակիրառ պրակտիկայում դադարական իրավունքը են քննել հետաքննության մարմինների աշխատակիցների, քննիչների, դադարական դադարակի, օպերատիվ-հետաքննության գործունեություն իրականացնող մարմինների կողմից դրսեւորված անգործության դեմ բերված բողոքները: Պարասահմանող կողմը գրնում է, որ այդ նորմում որոշակիության սկզբունքը չի խախվել եւ միանշանակորեն բողոքները կարող են բերվել եւ պետք է քննության առնվեն ինչպես գործողության, այնպես էլ անգործության դեմ: Ներկայացնեար՝ վիճարկվող նորմի եւ ՀՀ Սահմանադրության 1, 3, 6 եւ 43 հոդվածների միջնորդ որեւէ հակասության մասին խոսք չի կարող գնալ:

Պարասահմանող կողմը գրնում է նաև, որ ՀՀ քրեական դադարական պաշտոնագործական օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասը սահմանում է հետաքննության մարմինների, քննիչի, դադարական դադարակի, օպերատիվ-հետաքննության գործունեություն իրականացնող մարմինների ու պաշտոնագործական անձանց գործողությունների եւ կայացրած որոշումների բողոքարկման հերթականությունը, եւ դադարական հսկողության

իրականացումն այդ գործընթացում «պաշտպանության իրավունքն իրականացնելու համար միջանկյալ օղակ» գնահարվել չի կարող, քանի որ «Եւ դադախազական հսկողությունը, Եւ դադախան հսկողությունը միմյանց լրացնող ինսպիրությունը Են», հետեւաբար, ինչպես գիտում է պատասխանողը, ՀՀ քրեական դադախարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասը համապարախանում է Սահմանադրությանը:

ՀՀ քրեական դադախարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության առնչությամբ պատասխանող կողմը գիտում է, որ օրինական ուժի մեջ մրած դադախան ակտերը պարբաղիր կադարման ենթակա են ցանկացած սուբյեկտի կողմից Եւ դրանց չկադարման համար օրենքով սահմանված են պատասխանադրության համապարախան միջոցներ: Այսինքն՝ այն դեպքում, եթե դադախանը որոշում է կայացնում պարբավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու անձի իրավունքների Եւ ազատությունների խախտումը, ապա վարույթն իրականացնող մարմնը չի կարող չկադարկել դադախանի որոշումը, հակառակ դեպքում դժվար պաշտոնադար անձը ենթարկվելու է պատասխանադրության, այդ թվում՝ քրեափական: Ետեւաբար, առաջարկում է ՀՀ քրեական դադախարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը համապարախանող:

4. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դադախան անհրաժեշտ է համարում անդրադառնալ.

- մինչդադախան վարույթում հետաքրքրություն Եւ նախաքննություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, պաշտոնադար անձանց, դադախանագի որոշումների Եւ գործողությունների դադախան բողոքարկման ինսպիրություն սահմանադրափական բովանդակությանը, օրենսդրական կարգավորմանն ու նշանակությանը,

- մինչդադախան վարույթում դադախան վերահսկողության Եւ դադախանական հսկողության գործառույթների բովանդակությանը, դրանց դադախանագի անձանց ինսպիրություն թույլապրելի շրջանակներին, հաշվի առնելով նաև դադախան բողոքարկման ինսպիրություն կիրառման վերաբերյալ սահմանադրական դադախանի որոշումներով արդահայտված իրավական դիրքորոշումները,

- հետաքրքրություն Եւ նախաքննություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, պաշտոնադար անձանց, դադախանագի որոշումների Եւ գործողությունների դադախան բողոքարկման ինսպիրություն կիրառման պրակտիկային՝ այնքանով, որքանով առնչվում է դիմումի առարկային:

5. Մինչդափական վարույթում հետաքննություն եւ նախաքննություն, օպերափիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, պաշտոնագործ անձանց, դափախազի որոշումների եւ գործողությունների դափական բողոքարկման ինստիտուտը (ՀՀ քր. դադ. օրենսգրքի 278 հոդվածի 2-րդ մաս, 290 հոդված) որպես քրեական վարույթում անձի իրավունքների ու ազագությունների պաշտպանության միջոց կոչված է երաշխավորելու ՀՀ Սահմանադրության ինչպես 18 եւ 19 հոդվածներում, այնպես էլ 3, 14, 14.1, 16, 17 եւ անձի իրավունքների ու ազագությունների պաշտպանության սահմանադրախրավական սկզբունքի գերակայությունն արգացողող բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված նորմերի կենսագործումը: Այն կոչված է պաշտպանելու անձի ինչպես սահմանադրական, այնպես էլ օրենքով երաշխավորված այլ իրավունքները, ազագությունները՝ վերոհիշյալ պետական մարմինների ու պաշտպանագործ անձանց անօրինական (անիրավաչափ) որոշումներից ու գործողություններից եւ իրացվում է արդարադափական առանձնահատուկ գործառույթի՝ մինչդափական վարույթի նկարմամբ դափական վերահսկողության միջոցով: Վերջինս դրսեւորվում է նաև քննչական, օպերափիվ-հետախուզական գործողություններ կափարելու եւ անձի սահմանադրական իրավունքներն ու ազագությունները սահմանափակող դափավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ հետաքննության մարմնի, քննիչի կամ դափախազի միջնորդությունները քննելու միջոցով (ՀՀ քր. դադ. օրենսգրքի 278 հոդվածի 1-ին մաս, 282 հոդված):

ՀՀ քրեական դափավարության օրենսգրքի, վերջինիս՝ «Դափական վերահսկողությունը մինչդափական վարույթի նկարմամբ» վերպատությունը կրող 39-րդ գլխի նորմերի, համալիր վերլուծությունը վկայում է, որ հետաքննության մարմինների, քննիչի, դափախազի եւ օպերափիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների եւ գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքների քննությունը, որպես մինչդափական վարույթի նկարմամբ դափական վերահսկողության գործառույթ, ունի իր առանձնահատուկ խնդիրներն ու նպագակները, մասնավորապես՝ բողոքարկվող որոշումների եւ գործողությունների օրինականությունը (ՀՀ քրեական դափավարության օրենսգրքի եւ օրենսդրության այլ ակտերի պահանջներին համապատասխանությունը) սպուգելու արդյունքում **պարզել անձի** (կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, գումժողի, քրեական դափավարության այլ մասնակցի կամ այլ անձի) **իրավունքների եւ ազագությունների խախտման փասթը** եւ կայացնել համապատասխան որոշում՝ անձի իրավունքների եւ ազագու-

թյունների խախումը վերացնելով՝ վարույթն իրականացնող մարմնի պարփականության, կամ բողոքը մերժելու վերաբերյալ:

Սույն գործով դիմող կողմի ներկայացրած փաստարկների գեսանկյունից, ՀՀ քրեական դափավարության օրենսգրքի վիճարկվող 290 հոդվածի 1-ին և 5-րդ մասերի սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դափարանն անհրաժեշտ է համարում կարեւորել այդ նորմերով կարգավորվող քրեադափավարական հարաբերությունների ինչպես սուբյեկտների շրջանակը, այնպես է՝ **օբյեկտը**, եղնելով վերոհիշյալ հոդվածի և օրենսգրքի այլ նորմերի համակարգային բովանդակությունից, ինչպես նաև քրեական գործերով արդարադափություն իրականացնելիս դափարանի ընդհանուր լիազորություններից (ՀՀ քր. դափ. օրենսգրքի 41 հոդված): Մասնավորապես, վիճարկվող 290 հոդվածի 1-ին մասի համաձայն հետաքրքրության մարմնի աշխափակցի, քննիչի, դափախազի, օպերատիվ-հետաքրքրության գործողություններ իրականացնող մարմինների որոշումները և գործողությունները բողոքարկող սուբյեկտներ են քրեական դափավարության մասնակիցները և այլ անձինք, որոնց իրավունքները և օրինական շահերը խախվել են այդ **որոշումներով և գործողություններով**: Հիշյալ հոդվածի նույն մասի համաձայն քրեական գործերով մինչդափական վարույթում որպես դափական բողոքարկման անմիջական օբյեկտ (առարկա) են հետաքրքրության մարմնի աշխափակցի, քննիչի, դափախազի, օպերատիվ-հետաքրքրության գործողություններ իրականացնող մարմինների՝ ՀՀ քրեական դափավարության օրենսգրքով նախագիծաված որոշումները և գործողությունները, այսինքն՝ այնպիսի **որոշումներ ու գործողություններ**, որպիսի հափկապես մարմանշված են օրենսգրքի համապարախան նորմերում: Միաժամանակ, ՀՀ քրեական դափավարության օրենսգրքի՝ մինչդափական վարույթի նկարմամբ դափական վերահսկողությանը նվիրված 39-րդ գլուխ 278 հոդվածը (որը վերաբերում է դափական վերահսկողության ոլորտին) սահմանում է (մաս 2), որ «Դափարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքրքրության մարմինների, քննիչի, դափախազի և օպերատիվ-հետաքրքրության գործունեություն իրականացնող մարմինների **որոշումների և գործողությունների** օրինականության վերաբերյալ բողոքները»:

Նշվածին գուգահետ, օրենսգրքի 290 հոդվածի 2-րդ մասը նախագիծաված է նաև հետաքրքրության, նախաքրքրության մարմինների, դափախազի դափական բողոքարկման ենթակա լրացուցիչ այլ գործողություններ ու որոշումներ: ՀՀ քրեական դափավարության օրենսգրքի 8-րդ բաժնի («Քրեական գործով մինչդափական վարույթ») հոդվածների, 290 հոդվածի 1-ին, 2-րդ մասերի համեմափական վերլուծությունը

վկայում է, որ օրենսգրքի վիճարկվող 290 հոդվածի 1-ին մասի իմաստով մինչդափական վարույթում դափական բողոքարկման ենթակա են իրավասու մարմինների ու պաշտոնափար անձանց այն **որոշումները եւ գործողությունները**, որպիսիք կայացվել են այդ սուբյեկտների՝ օրենսգրքի 53, 55 եւ 56 հոդվածներում նախափեսված իրենց ընդհանուր լիազորությունների շրջանակներում։ Իսկ օրենսգրքի 290 հոդվածի 2-րդ մասը որպես առանձնահագուստ իրավակարգավորում սահմանում է, որ. «Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դափարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի եւ դափախազի **իրաժարվելը**, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարծելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախափեսված դեպքերում»։

Այսուհանդերձ, **«**քրեական դափավարության օրենսգրքի 41 հոդվածի համաձայն դափարանը, ի թիվս քրեական գործերով ընդհանուր այլ լիազորությունների, իրավասու է «...քննել եւ լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դափախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների եւ գործողությունների (**անգործության**) դեմ բողոքները»։ Այսպիսով, մինչդափական վարույթում օրենսդիրը դափարանին լիազորել է քննելու ոչ միայն քրեական վարույթ իրականացնող իրավասու մարմինների ու պաշտոնափար անձանց որոշումների եւ գործողությունների օրինականության, այլև՝ **անգործության** վերաբերյալ բողոքները, իսկ «...եւ եթե նրանց բողոքները չեն բավարարվել դափախազի կողմից» պայմանը բացառապես վերաբերում է հետաքննության մարմինների, քննիչի, դափախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների **որոշումներին ու գործողություններին**, հետեւաբար՝ **«**քրեական դափավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման շրջանակներում չեր կարող վերագրվել նաև հիշյալ մարմինների **անգործությանը**։

6. Դիմողներն իրենց փաստարկներում առաջ են քաշում իրավակիրառական պրակտիկայում ձեռավորված այն մոդելումը, համաձայն որի՝ **«քրեական դափավարության օրենսգրքի վիճարկվող 290 հոդվածի 1-ին մասի դրույթները դափարանների կողմից ընկալվում են որպես նաև քրեական վարույթ իրականացնող մարմինների **անգործության** դեմ դափական բողոքարկման կարգ, ի հասպարումն որի սահմանադրական դափարան են ներկայացրել **«**ուսպիկանության անգործության դեմ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր**

իրավասության դադարանում քննված բողոքի վերաբերյալ կայացված որոշումը եւ այն Շ՛ վերաբննիչ քրեական դադարանում, Շ՛ վճռաբեկ դադարանում բողոքարկվելու արդյունքում կայացված որոշումները:

Դադարական այդ ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ ոսպիկանության անգործության դեմ բողոքը քննության է առնվել Շ՛ քրեական դադարապության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի հիմքով եւ մերժման այդ նորմում նախագրեսակած դադարախազական բողոքարկման կարգը դիմողի կողմից չպահպանվելու պարզագույն պատճենաբանությամբ: Գործում առկա դադարական նման այլ ակտերի ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ դադարանները Շ՛ քրեական դադարապության օրենսգրքի վերոհիշյալ նորմի դրույթները մեկնաբանել են նույնակերպ՝ մերժելով անձանց բողոքներն այն դեպքերում, երբ չի պահպանվել քրեական վարույթ իրականացնող մարմինների ու պաշտոնադար անձանց որոշումները, գործողությունները եւ անգործությունը նախօրոք դադարախազին բողոքարկելու պահանջը: Գործնականում դադարական պրակտիկան Շ՛ քրեական դադարապության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի առնչությամբ «գործողություն» եզրույթը հավասարապես վերագրել է նաև անգործությանը:

7. Ելեկով Շ՛ քրեական դադարապության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի սահմանադրականության վերաբերյալ դիմող կողմի հարցադրումներից՝ սահմանադրական դադարանն անհրաժեշտ է համարում այդ նորմի իրավական բովանդակությունը բացահայտել նաև Շ՛ Սահմանադրության 5 հոդվածի 1-ին մասում, 18 եւ 19 հոդվածներում, 91 հոդվածի 1-ին մասում եւ 103 հոդվածում ամրագրված նորմագրիվ պահանջներին համապատասխանության ու դրանց կադարման համար բավարար երաշխիքներ պարունակելու փեսանկյունից՝ այնքանով, որքանով ըստ վիճարկվող նորմի դրանց բովանդակության՝ հետաքաննության, նախաքննության մարմինների, պաշտոնադար անձանց, դադարախազի որոշումները եւ գործողությունները ենթակա են ինչպես դադարախազական հսկողության, այնպես էլ դադարական վերահսկողության: Այս առումով վիճարկվող նորմի իրավակարգավորումից դուրս է հետաքաննության, նախաքննության մարմինների, պաշտոնադար անձանց եւ դադարախազի անգործության վերաբերյալ բողոքների քննությունը: Դադարանն իրավասու է այդպիսի բողոքները քննել Շ՛ քրեական դադարապության օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմքով: Սահմանադրական դադարանը գլուխ է, որ քրեական գործերով մինչդադարական վարույթում բողոքարկման (դադարախազական եւ դադարական) ինսդրիբուլի իրավակիրառման շրջանակներում

«գործողություն» եւ «անգործություն» եզրույթները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով մինչդադարական վարույթի իրավակարգավորման շրջանակներում նույնարուվանդակ մեկնարանվել չեն կարող: Դեպական մարմիններն ու պաշտոնագործ անձինք (այդ թվում՝ քրեական վարույթ իրականացնող մարմիններն ու պաշտոնագործ անձինք) ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի երկրորդ մասի նորմագիվ պահանջի համաձայն իրավատու են կարարելու միայն գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Սահմանադրական դատարանը գլուխում է, որ «անգործություն» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում, սույն գործի առարկայի շրջանակներում, պեսք է ընկալվի որպես հեփաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնագործ անձանց եւ դատախազի՝ Սահմանադրությամբ եւ օրենքներով նախագետաված լիազորությունների (որոշումների ընդունում, իրենց լիազորություններից բխող գործունեության իրականացում) չկապարում: Վերջինս նույնպես կարող է առաջացնել իրավական հեփեւանքներ, պարզապես դառնալ մարդկանց սահմանադրական իրավունքների խախտման: Դեփեւաբար, նման անգործության դատական բողոքարկման նպագակը եւ ոչ իրավաչափի գործողության դատական բողոքարկման նպագակը նույնական են՝ հեփապնդում են իրավունքների պաշտպանության համանման խնդիր: Այլ բան է, որ օրենսդիրը կարող է սահմանել դրանց բողոքարկման դարբեր ընթացակարգեր, սակայն մեկը մյուսով կլանելու եւ նման իրավակիրառական պրակտիկա ձեւավորելու հանգամանքը վկայությունն է այն բանի, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի առկա խմբագրությունն իր մեջ անորոշություն է պարունակում եւ կիրառվում է իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան դրված բովանդակության շրջանակներում:

8. Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասում նախագետաված դատական բողոքարկման կարգին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հեփաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնագործ անձանց, դատախազի որոշումները եւ գործողությունները դատարան բողոքարկելու՝ անձանց (քրեական դատավարության մասնակիցների եւ այլ անձանց) իրավունքը կարող է իրացվել հեփեւալ նախապայմանների դեպքում.

- եթե խախտվել են այդ անձանց իրավունքները եւ օրինական շահերը,
- եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

Վերջինիս դեպքում հեփեւում է, որ անձը դատախազի որոշումը կամ գործողությունը բողոքարկելիս պեսք է դիմի նաև վերադաս դատախազին: Խսկ իրավունքների

Եւ օրինական շահերի խախտման վերաբերյալ նախապայմանի առաջադրումը վիճարկվող նորմի իրավակարգավորման շրջանակներում խոչընդուք չի կարող հանդիսանալ անձի բողոքն ըստ Էության քննելու համար:

Այսպիսով, ինչպես վկայում է վիճարկվող նորմի իրավական բովանդակությունը, անձն իր իրավունքների ու ազագությունների դարսական պաշտպանության՝ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով նախաբեսված իրավունքն իրացնելիս նախ պարփակոր է դարսախազի առջև հայցել իր բողոքի բավարարում, այսինքն՝ արդարադարձության մաքչելիության իր իրավունքն իրականացնել իրավական պաշտպանության մեկ այլ միջոցի նախապես գործադրման պայմանով:

Սահմանադրական դարսարանն իր մի շարք որոշումներով, մասնավորապես՝ ՍԴՈ-652, ՍԴՈ-665 եւ ՍԴՈ-690, բազմից անդրադատության մաքչելիության եւ արդյունավելության խսդիրներին, կարեւորելով անձի իրավունքների արդյունավելու պաշտպանությունը երաշխավորելու համար նորմագիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ միաժամանակ կարեւորել է միջազգային պարփակություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազագությունն արդարադարձության մաքչելիության եւ, հարկապես՝ դարսական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում: Այդ կարգը, ի թիվս դարսարան դիմելու այլ պայմանների (այդ թվում՝ ձեւական), կարող է իրավաչափորեն ներառել նաև օրենքով սահմանված՝ իրավունքների պաշտպանության արդարադարձանական միջոցն սպառելու պայման:

Սահմանադրական դարսարանը գիտում է, որ ՀՀ քրեական դարսավարության օրենսգրքի վիճարկվող նորմի դարսական պրակտիկայի կողմից դրված մեկնաբանության շրջանակներում այդպիսի **պարփակիք** պայմանի առկայությունը, երբ քրեական վարույթ իրականացնող մարմնի, պաշտոնադարձ անձի **անզործությամբ** խախտվել են քրեական դարսավարության մասնակիցների կամ շահագրգիռ այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, եւ նա չի կարող առանց նախապայմանների իրացնել դարսական պաշտպանության իր իրավունքը, չի բխում ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի սահմանադրափակական բովանդակությունից: Այդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազագությունների դարսական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավելու միջոցների իրավունք»: ՀՀ Սահմանադրության եւ օրենքների հիման վրա այդպիսի համարժեք միջոցների նախաբեսումն ու մաքչելիության ապահովումը պետության պարփականությունն է:

«**Սահմանադրության 5, 91 և 103 հոդվածների նորմերին համապարապխան ՀՀ-ում դափական իշխանությունն ու դափախազությունը սահմանադրափակական ինսպիրուցիոնալ ամկախ համակարգեր են՝ բաժանված պետքական իշխանության այլ (օրենսդիր, գործադիր) մարմիններից, եւ գործում են Սահմանադրությամբ ու օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում»:**

«**Դափական իշխանության սահմանադրափակական դերի եւ բովանդակության բացահայգման ու գնահապման խնդիրներին սահմանադրական դափարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում:**

«**Սահմանադրության 103 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դափախազությունն օրենքով նախագետական դեպքերում եւ կարգով հսկողություն է իրականացնում հետաքաննության եւ նախաքննության օրինականության նկազմամբ։ Քրեական գործերով մինչդափական վարույթում դափախազի լիազորությունները սահմանված են ՀՀ քրեական դափավարության օրենսգրքի 53 հոդվածում, ինչպես նաև «Դափախազության մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածում, որոնցում պարունակվող դրույթների վերլուծությունը վկայում է, որ, ի ապահովումն սահմանադրական վերոհիշյալ պարտականության կափարման, մինչդափական վարույթում հսկողություն իրականացնելիս դափախազը պարտասխանափու է հետաքաննության եւ նախաքննության լրիվության, օբյեկտիվիվության, բազմակողմանիության եւ արդյունավետության համար («Դափախազության մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի 3-րդ մաս), օժբված է այնպիսի լիազորություններով, որոնք կոչված են դեկավարելու (ուղղորդելու) հետաքաննության մարմնի, քննիչի **դափավարական գործունեությունը**, ինչպես նաև լուծելու վերջիններիս որոշումների եւ գործողությունների դեմ բերված բողոքները, «**բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դափարանին**» (օրենսգրքի 53 հոդվածի 9-րդ կետ): Վերոթարկյալ գործառույթները դափախազն իրականացնում է հիշյալ հոդվածում նախագետական դիր լիազորությունների շրջանակներում՝ բողոքում հիմնավորված օրինախախփումները վերացնելու նպարակով դեկավար ցուցումներ եւ այլ հանձնարարություններ դադու հետաքաննության մարմնին, քննիչին կամ օպերաֆիլ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին՝ անհրաժեշտության դեպքում **վերացնելով նաև վերջիններիս որոշումները**:**

«**ՀՀ քրեական դափավարության օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի եւ 290 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ինչպես դափախազը, այնպես էլ դափարանն իրավասու են քննելու վերոհիշյալ մարմինների, այդ թվում՝ նաև դափախազի՝ ՀՀ քրեական դափավարության օրենսգրքում նախագետական դեպքում **վերացնելով նաև վերջիններիս որոշումները**:**

թյունների օրինական եւ հիմնավոր լինելու դեմք բերված բողոքները: Սակայն դարբեր են այդ բողոքների քննության արդյունքում խախտված իրավունքի վերականգնման եղանակները, ձեւերը եւ իրավական հետեւանքները, մասնավորապես, դադարական վերահսկողությունն իրականացվում է անձի իրավունքների եւ ազագությունների խախտումը վերացնելու իրավասու մարմնի (պաշտոնագործ անձի) պարտականության մասին որոշման կայացմամբ: Ենթեարար, դրանով է պայմանավորված նաև ՀՀ քրեական դադարական արդյունքում օրենսգրքի 290 հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 5-րդ մասի նորմագիր պահանջը, որին համապատասխան բողոք քննելու արդյունքում դադարան անձի խախտված իրավունքը եւ ազագությունը վերականգնում է ոչ թե հերաքլեության մարմնին, քննիչին եւ օպերադիրի հետապահության գործողություններ իրականացնող մարմնին դադարական որոշակի գործողություններ կադարելու ցուցում փառով կամ նրանց որոշումները վերացնելով, ինչպես գեղի ունի դադարական հետապահության դեպքում, այլ այդ մարմինների ու պաշտոնագործ անձի կողմից թույլ դրված օրինախախտումը վերացնելը եւ անձի խախտված իրավունքներն ու ազագությունները վերականգնելը պարտավորեցնելով, որը բխում է դադարական իշխանության սահմանադրախավական բովանդակությունից եւ դրան համապատասխան՝ ՀՀ քրեական դադարական արդյունքում նախագրություններից: Սույն գործում առկա ԵԿԴ/007/11/09 գործով, վերոհիշյալ նորմի իրավական բովանդակությանն այդպիսի մեկնաբանում է փվել նաև ՀՀ վերաքննիչ քրեական դադարան իր՝ 08.05.2009թ. որոշմամբ: Այսպիսով, սահմանադրական դադարանը ոչ թե ժխտում է հանրային իշխանության մարմինների, պաշտոնագործ անձանց որոշումների ու գործողությունների օրինականությունը վիճարկելու արդադարարանական (դժվար դեպքում՝ դադարակին բողոքարկելու) կարգը՝ որպես ՀՀ Սահմանադրության 18 հոդվածով երաշխավորված իրավունքի իրացման միջոց, այլ կարեւորում է վերջինիս եւ վիճարկման դադարական միջոցի՝ իրավական բովանդակության, դրանց կիրառման հիմքերի (դեպքերի), օրենքով այնպիսի հսկակեցումը, որը սույն գործի առարկայի շրջանակներում լինի միակերպ ընկալելի ինչպես դիմող, այնպես էլ իրավակիրառող սուբյեկտների համար, ընդգրկելով նաև սույն որոշմամբ կարեւորված այն առանձնահարկությունները, որոնք հապուկ են դադարական հսկողությանն ու դադարական վերահսկողությանը: Իրավակարգավորման այսպիսի եղանակը կլողմնորոշի քրեական դադարական մասնակիցներին եւ շահագրգիռ այլ անձանց առավել արդյունավել ձեւով իրականացնել Սահմանադրության 18 հոդվածում երաշխավորված իրենց իրավունքը:

Սահմանադրական դադարանը, հաշվի առնելով նաև ՀՀ օրենսդրական զարգացումների ընդհանուր դրամաբանությունը (մասնավորապես՝ արքահայտված ՀՀ սահմանադրական դադարանի 16 հունվարի 2007թ. ՍԴՈ-673 որոշման մեջ, ինչպես նաև ՀՀ վարչական դադարավարության օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասում), գրնում է, որ այն դեպքում, եթե պետքական մարմինը (փվյալ դեպքում քրեական վարույթ իրականացնող) կամ պաշտոնագործ անձն իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, դադարանը սպուզում է, թե արդյո՞ք փվյալ մարմնի կողմից ակտին ընդունելը կամ այն ընդունելը մերժելը, գործողությունը կադարելը կամ անզործություն դրսեւորելն իրականացվել են օրենսդրությանը համապարախան:

Վյապիսով, քրեական գործերով մինչդադարական վարույթի նկարմամբ դադարախազական հսկողության եւ դադարական վերահսկողության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող, այդ թվում՝ սույն գործով վիճարկվող, իրավանորմերի համալիր վերլուծությունը միանշանակ վկայում է այդ գործառույթների **ընդհանուր նպատակի** (որպես իրավապահ գործունեություն), սակայն դարբեր առանձնահավկությունների մասին, հետեւաբար, պարասիանող կողմի փասբարկն այն մասին, թե «...եւ դադարախազական հսկողությունը, եւ դադարական հսկողությունը միմյանց լրացնող ինսպիրութներ են», չի բխում սույն գործով վեճի առարկայից եւ այդ գործառույթների սահմանադրահրավակական բովանդակությունից: Սահմանադրական դադարանը գրնում է, որ քրեական գործերով մինչդադարական վարույթի շրջանակներում քրեական վարույթ իրականացնող մարմինների ու պաշտոնագործ անձանց որոշումների, գործողությունների ու անզործության դադարական բողոքարկման ինսպիրութի կիրառման պրակտիկայում ՀՀ քրեական դադարավարության օրենսգրքի՝ այդ բնագավառը կարգավորող նորմերի դրույթները պետք է ընկալվեն նաև որպես համակարգային ամբողջություն, որը պայմանավորված է մինչդադարական վարույթի նկարմամբ դադարական վերահսկողության սահմանադրահրավական բովանդակությամբ եւ երաշխիք է ՀՀ Սահմանադրության 18 հոդվածով նախադեսված անձանց իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դադարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը

Ո Ր Ո Շ Ե Յ .

1. Հայաստանի Հանրապետության քրեական դափավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի «...եւ եթե նրանց բողոքները չեն բավարարվել դափախազի կողմից» դրույթը, դափական պրակտիկայում դրան դրված՝ **նաեւ «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով**, որով գործնականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա փարածելով 1-ին մասում նախադեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկազմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը՝ սահմանափակվել են մարդու՝ դափարանի մաքչելիության եւ արդար դափաքննության սահմանադրական իրավունքները, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության քրեական դափավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասը համապարասիանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՇՈԴ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

7 դեկտեմբերի 2009 թվականի
ՍԴՈ- 844